Արձանագրություն N 6
«ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն» ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«13» դեկտեմբերի 2018թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Մեսրոպյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյան

1.Գնանշման հարցում ընթացակարգի արդյունքների ամփոփման, 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու և հարցում ներկայացնելու մասին

(Կ. Գասպարյան)

Գնահատող հանձնաժողովի կողմից 11.12.2018թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է ուղարկվել Ա/Ձ Լարիսա Նալբանդյանին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը /«Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով/:

Ծանուցման մեջ սահմանված ժամկետում Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի կողմից չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 31.10.2018թ.-ի և 01.11.2018թ.-ի եզրակացությունները, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99-րդ և 139-րդ հոդվածները և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 44-րդ, 45-րդ կետերով և 48-րդ կետի 2 ենթակետով գնահատող հանձնաժողովը որոշեց՝ Ա/Ձ Լարիսա Նալբանդյանի հայտը մերժել: <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարություն համապատասխան ընթացքը լուծելու համար:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել <<ՀԱԼԴԻ Քոնսալթ>> ՍՊԸ-ին:

- հարցում ներկայացնել ՀՀ պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար:

- ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Կ. Գասպարյան)

2.1 <<ՏԿՆ-ԳՀԱՇՁԲ-2018/8Ն>> ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել եզրակացության և մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերի ստացման օրը, ՀՀ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/3, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն, 2-րդ հարկ, N 208 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Ա. Պապյան

_____ Ն. Մեսրոպյան

Քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան